# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ
համայնք, ,

«26» հունիսի 2014թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված աշխատանքները:

Սույն հրավերի ծածկագիրն է՝ <<ՄՔ-ՇՀԱՇՁԲ-11/1-14/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1, Մարալիկի քաղաքապետարան, 2-րդ հարկ հասցեով, մինչև 2014թ. հուլիսի 8-ը, ժամը 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Սաթենիկ Զաքարյանը:

Հայտերը կբացվեն քաղաք Մարալիկ, Մարալիկի քաղաքապետարանի շենքի 2-րդ հարկում, Մաղաթյան 1 հասցեով, 2014 թվականի հուլիսի 8-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար՝ Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոցի, Ձերժինսկի փողոցի խաչմերուկից դեպի Գագարին փողոցի խաչմերուկն և քաղաքապետարանի հրապարակ տանող խաչմերուկից դեպի Բարեկամության փողոցի խաչմերուկն ընկած հատվածների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերումը:

Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար՝ Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոցի, Ձերժինսկի փողոցի խաչմերուկից դեպի Գագարին փողոցի խաչմերուկն և քաղաքապետարանի հրապարակ տանող խաչմերուկից դեպի Բարեկամության փողոցի խաչմերուկն ընկած հատվածների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների կատարման (որոնք կազմված են 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալներն և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցումով):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումն և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մարալիկի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ maralik.shirak@mta.gov.am:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ